ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահության հերթական նիստը։

Նիստում լսվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Բ. Բ. Պիոտրովսկու զեկուցումը Կարմիր բլուրում 1949 թվին կատարված հնագիտական պեղումների նախնական արդյունքների մասին։

Նախագահությունը նշեց, որ Կարմիր բլուրում աշխատանքները հաջողվեն ընթանում և այս տարվա հայտնագործությունները գիտական բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում։

Հատուկ հանձնաժողովին հանձնարարվել է նախապատրաստել պեղումների վայրում Պետական պատմական թանգարան բացելու հարցը։

Այնուհետև Գիտությունների ակադեմիայի Կառուցվածքների և շինությունների ինստիտուտի կողմից անցկացվող փորձնական շինարարության ընթացքի մասին զեկուցեց Ինստիտուտի դիրեկտորի պաշտոնակատար ընկ. Զ. Հացագործյանը։

Ակադեմիայի նախագահությունը անբավարար գտավ շինարարության ընթացքը և Ինստիտուտին առաջարկեց ուժեղացնել իր աշխատանքն այդ ասպարեզում։

Այնուհետև լսվեց ընկ. Հ. Ստեփանյանի զեկուցումը Հայաստանի աշխարհագրական ընկերության աշխատանքի մասին։

Ակադեմիայի նախագահությունը ընկերությանը պարտավորեցրեց վերսկսել Հայկական ՍՍՌ աշխարհագրական բառարանը կազմելու աշխատանքը, այն հաշվով, որ վերջինս հրատարակվի 1950 թվին։ Առաջարկված է ուժեղացնել մասսայական աշխատանքը, մանավանդ շրջանային կենտրոններում ու գյուղերում, ընդարձակել դասախոսությունների ցիկլը, ուժեղացնել կապը դպրոցի աշակերտների հետ, հրատարակության պատրաստել մի շարք պոպուլյար բրոշյուրներ ռուս հայտնի Հանապարհորդների ու աշխարհագրագետների մասին։